

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՅԵՆԱՐ

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԹԵՄԱՆ	<u><<Ապահով համացանց>></u>
ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ	<u>Ծնողներին ներկայացնել համացանցի հնարավորությունները, վտանգները, ապահով համացանցի անհրաժեշտությունը և այդ ուղղությամբ կատարվելիք համապատասխան միջոցառումները</u>
ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ	<u>Պաստառ <<Ապահով համացանց>> վերնագրով, տեսագրիչ</u>
ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ	<u><<Անվտանգ համացանց>> վերնագրով շնորհանդես /պրեզենտացիա/ (հեղինակ՝ << Արարատի մարզի Փոքր Վեդու Մ. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի օպերատոր Գոհար Մուրադյան), <<Անվտանգ հնտերնետ>> թեմայով տեսանյութ (հեղինակ՝ Երևանի Մ. Զանբազյանի անվան հ. 79 դպրոցի աշխատակից Վահե Պողոսյան)</u>

Բարև Ձեզ, հարգելի՛ ծնողներ:

Ձեզ ողջունում է << Արարատի մարզի Փոքր Վեդու Մ. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոցի օպերատոր Գոհար Մուրադյանը:

Այսօրվա ծնողական ժողովը կրում է <<Ապահով համացանց>> խորագիրը, որի նպատակն է Ձեզ՝ ծնողներիդ, ներկայացնել շատ արդիական խնդիրներից մեկը՝ համացանցի ապահովության և անվտանգության անհրաժեշտությունը, զինել լրացուցիչ գիտելիքներով, որպեսզի կարողակաք վերահսկել Ձեր երեխաների գործունեությունը համացանցում՝ հեռու պահելով նրանց վտանգներից:

Ծնողական ժողովը կազմակերպվել է «Ինտերնետ հանրություն» և «Մեդիակրթության կենտրոն» հասարակական կազմակերպությունների «Ապահով Համացանց 2015» ծրագրի շրջանակներում, որին աջակցում է «Orange Արմենիա» ընկերությունը և նվիրված է Ապահով համացանցի միջազգային օրվան, որը նշվում է յուրաքանչյուր տարվա երկրորդ ամսվա երկրորդ շաբաթվա երկրորդ օրը:

2004 թվականից Եվրոպայի անվտանգ Ինտերնետի կենտրոնների ցանցը՝ Insafe-ը, որը գործում է Եվրահանձնաժողովի «Անվտանգ Համացանց» ծրագրի շրջանակներում, զբաղվում

Է այս տոնի կազմակերպմամբ: Այժմ Անվտանգ Համացանցի օրը նշվում է աշխարհի ավելի քան 110 երկրներում, որտեղ կազմակերպվում են ավելի քան հազար միջոցառումներ, որոնք նպատակամղված են ինտերնետ-օգտատերերի պաշտպանվածության բարձրացմանը:

Դա կարևոր միջազգային օր է՝ նվիրված ցանցում երեխաների և չափահասների անվտանգության հիմնախնդրին և բարոյական առցանց-միջավայրի ձևավորմանը:

Այսօր արդեն ակնհայտ է և պարզ՝ տարեցտարի համացանցը դառնում է առավել վտանգավոր: Ըստ հակավիրուսային տարբեր կազմակերպությունների՝ զգալի աճել է հաքերային հարձակումների, համացանցային խաբեությունների և մեքենայությունների թվաքանակը:

Այսօր յուրաքանչյուր համակարգիչ, միանալով համացանցին, դառնում է հաքերների և համացանցային մեքենայությունների մեջ մասնագիտացված տարբեր խնբերի հավանական զոհը: Եվ չնայած այն փաստին, որ ողջ աշխարհում անընդմեջ ավելանում են համացանցային անվտանգությանն ուղղված ծախսերը և նոր ծրագրերը, միևնույն է, համացանցը պակաս վտանգավոր չի դառնում:

Այն, որ հաքերները մանր համացանցային ավազակներից աստիճանաբար վերածվել են «քողարկված» գործունեությամբ զբաղվողների, որոնց առաջնային նպատակը եկամուտն է, այլևս գաղտնիք չէ: Իսկ այն, որ նրանք համացանցում իրենց զգում են ինչպես «տանը», հնարավորություն է տալիս գումար աշխատել համացանցին կուրորեն վստահող մարդկանց խաբելու ճանապարհով:

Այստեղ կարևոր է և պարտադիր հասկանալ, որ քանի դեռ օգտագործողները, առանց գիտակցելու վտանգավորության աստիճանը, համացանցին են վստահում իրենց անձնական տվյալները, էլ.փոստի հասցեն ու գաղտնաբառերը, կրեդիտ քարտերի համարները և առանց հապաղելու սեղմում են բոլոր հղումներն ու այցելում կասկածելի կայքեր, վերջիններիս «բարությունից» օգտվողների թվաքանակը շարունակելու է աճել:

Համացանցն այսօր դարձել է առավել վտանգավոր, որովհետև հակավիրուսային ընկերություններն սկսել են վա՛տ աշխատել: Ամենևին: Համացանցը դառնում է առավել վտանգավոր այն պարզ պատճառով, որ շատ օգտագործողներ շարունակում են համացանցը համարել անվտանգ և ապահով:

Ներկայացվող տեսանյութը ներկայացնում է այն բոլոր խնդիրները, որոնց առաջ ամեն օր կարող է կանգնել յուրաքանչյուր երեխա:

Ներկայացվում է <<Անվտանգ ինտերնետ>> թեմայով տեսանյութը (հեղինակ՝ Երևանի Մ. Զանբազյանի անվան հ. 79 դպրոցի աշխատակից Վահե Պողոսյան)

Այժմ իմ հեղինակած <<Անվտանգ համացանց>> վերնագրով շնորհանդեսի միջոցով, որը տեղադրված է lib.armedu.am <<Պաշարների շտեմարան>> կայքում, կփորձենք ծանոթանալ համացանցում առավել հաճախ հանդիպող վտանգներին և այն քայլերին, որոնք ուղղված են այդ վտանգներից երեխաներին հեռու պահելուն, համացանցում երեխաների գործունեությունը վերահսկելուն, անցանկալի բովանդակությամբ էջերը, գովազդները արգելափակելուն և այլն...

Ներկայացվում է <<Անվտանգ համացանց>> շնորհանդեսը (պրեզենտացիան)

1. ԻՆՉ Է ՀԱՄԱՑԱՆՑ /3-6-րդ սլայդեր/

Համացանցը /ինտերնետը/ տարբեր ցանցերի գլոբալ միավորում է, իսկ այդ ցանցերից յուրաքանչյուրն ունի աշխարհելու իր սեփական ավանդույթներն ու կանոնները: Այնուամենայնիվ, ինտերնետում աշխարհելու համար էթիկայի և անվտանգության ընդհանուր նորմեր են մշակված:

Մշտապես պահպանե՛ք ինտերնետային անվտանգության կանոնները. դրանք ստեղծվել են, որպեսզի ցանցում ձեզ անվտանգ և անկաշկանդ զգաք:

- Օգտագործի՛ր համացանցը կարիքներիդ համար, բայց այն մի սարքի քո բնակավայրը:
- Համացանցը միայն օժանդակ գործիք է:
- Համացանցը միայն օգտագործելու համար է:
- Մի՛ թույլատրիր, որ համացանցը քեզ օգտագործի:

Տարբեր մարդիկ համացանց ասելով տարբեր բաներ են հասկանում: Առավել տարածված է այն տեսակետը, որ դա, այսպես կոչված, համաշխարհային սարդոստայն է՝ World Wide Web-ը, որը հնարավորություն է տալիս հասնել համացանցին միացված համակարգիչներում տեղակայված ու միմյանց հետ կապված փաստաթղթերին:

Սակայն մենք համացանցը դիտարկում ենք որպես մի ամբողջականություն, որն իր մեջ ներառում է գլոբալ ցանցով իրար հետ կապված համակարգիչների բազմություն ու դրանց մատուցած ծառայությունները:

2. ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՎԻՐՈՒՍ /7-9-րդ սլայդեր/

Հարկավոր է իմանալ համակարգչի հետ կապված կարևոր տվյալները՝ թե ինչ է համակարգչային վիրուսը, հակավիրուսը:

Համակարգչային վիրուսը ծրագրավորողների կողմից գրված <<ինքնաբազմացման>> ունակությամբ օժտված փոքրածավալ ծրագիր է, որը կարող է համակարգչի աշխատանքում տարբեր անցանկալի երևույթների <<հեղինակ>> հանդիսանալ սկսած ամենաանմեղներից

էկրանին բերվող պատկերի աղավաղում, համակարգչային տվյալների ոչնչացում: Վիրուսի հիմնական աղբյուր կարող է լինել .

- ❖ Վիրուսակիր ֆայլ պարունակող սկավառակը,
- ❖ Վիրուսով վարակված կոշտ սկավառակը,
- ❖ Օպերացիոն համակարգում թաքնված վիրուսը:

3. ՎՆԱՍԱԿԱՐ ԾՐԱԳՐԵՐ /10-րդ սլայդ/

Վնասակար ծրագրեր (malicious software, malware) այն բոլոր ծրագրերի միասնական անվանումն է, որոնց նպատակն է այս կամ այն կերպ վնասել վերջնական օգտագործողի համակարգիչը:

4. Trojan (trojan horse, «տրոյական ձիեր», «տրոյաններ») /11-րդ սլայդ/

Վնասակար ծրագրերի այս տարատեսակը սկսել է առանձնացվել, երբ հայտնվեցին առաջին վիրուսները, որոնք, «դիմակավորվելով» որպես օգտակար ծրագիր, ստիպում են օգտագործողին բացել դրանք: Ներկայումս այս խմբին են դասվում տեղեկույթի գողության, ոչնչացման, փոփոխման ծրագրերը, առանձին համակարգիչների և ցանցերի աշխատանքը խաթարող տարբեր ծրագրեր: Այս ծրագրերի մեծ մասի գործունեությունն ուղղված է հասցված վնասից ֆինանսական օգուտ քաղելուն: Տրոյաններն հիմնականում առանձին ծրագրեր են, որոնք տարածվում են համացանցային «կոտրված» կայքերի, էլ. փոստի, ակնթարթային հաղորդակցման ծրագրերի և այլնի միջոցով: Ներկայումս տրոյանները կազմում են ծրագրային սպառնալիքների ամենամեծ խումբը:

5. Worm (որդ) /12-րդ սլայդ/

Այս տիպի վնասակար ծրագրերը նախ և առաջ առանձնանում են նրանով, որ ինքնաբազմանալու ունակություն ունեն, այսինքն ստեղծում և տարածում են իրենց կրկնօրինակները: Տարածման ավանդական ուղիներից բացի (էլեկտրոնային փոստ, ակնթարթային հաղորդակցման համակարգեր, ֆայլերի փոխանակման ցանցեր) որդերը իրենց կրկնօրինակները տարածում են ցանցային ռեսուրսների (ընդհանուր հասանելիությամբ թղթապանակների), և տեղեկույթի դյուրակիր կրիչների վրա: Որդը, որպես կանոն, նույնպես հանդես է գալիս որպես առանձին ծրագիր, բացառությամբ որոշ «անմարմին» տեսակների, որոնք հանդես են գալիս ցանցային փաթեթների տեսքով: Այս ծրագրերի գործունեության դաշտն ավելի նեղ է քան տրոյաններինը և հիմնականում ուղղված է տեղեկույթի ոչնչացմանը, օպերացիոն համակարգի ռեսուրսի փչացմանը, որոշ ծրագրերի աշխատանքի խանգարմանը:

6. Virus (վիրուս, դասական վիրուս) /13-րդ սլայդ/

Այս վնասակար ծրագրերը առաջացել են մյուսներից ավելի առաջ և սկիզբ են դրել «վիրուս» հասկացությանը: «Վիրուս» տերմինը ներկայումս լայնորեն կիրառվում է որպես բոլոր վնասակար ծրագրերին տրվող ընդհանուր անվանում: Դասական վիրուսը «վարակում» է կիրառական ֆայլերը՝ ծրագրային կոդի մեջ կատարելով այնպիսի փոփոխություն, որը թույլ է տալիս ապահովել իր սկիզբն ու աշխատանքը: Սովորաբար դասական վիրուսի գործունեությունը սահմանափակվում է կոնկրետ մեկ օպերացիոն համակարգի շրջանակներում, և տեղաշարժվելու համար անհրաժեշտ է մարդկային միջամտություն (վարակված ֆայլերի տեղափոխում էլ փոստի կամ տեղեկույթի կրիչների միջոցով):

7. ՀԱԿԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ /14-րդ սլայդ/

«Հակավիրուսային ծրագիր» հասկացությունը սահմանվում է որպես տրոյանների, որդերի, դասական վիրուսների և այլ վնասակար ծրագրերի նկատման և մշակման համակարգ: Որոշ հակավիրուսներ նկատում և աշխատում են նաև անցանկալի ծրագրերի հետ: Հակավիրուսային ծրագրերը, կախված իրենց տեսակից, վնասակար ծրագիր հայտնաբերելու դեպքում կատարում են տարբեր գործողություններ: Տրոյանները և Որդերը ամբողջությամբ բաղկացած են վնասակար կոդից և որևէ օգտակար ինֆորմացիա չեն պարունակում, այդ իսկ պատճառով էլ դրանք ուղղակի ջնջվում են հակավիրուսի կողմից: Իսկ դասական վիրուսները իրենց կոդով գտնվում են մյուս ֆայլերի մեջ և հետևաբար դրանց նկատմամբ կիրառվում է «բուժում», այսինքն՝ ֆայլի կոդը մաքրվում է վիրուսային հատվածից: Անհրաժեշտ է նշել, որ Տրոյանների և Որդերի դեպքում հակավիրուսը ոչ միայն ջնջում է դրանք, այլև վերականգնում է օպերացիոն համակարգի ռեսուրսն ու ֆայլային կառուցվածքը:

Փորձենք միասին պարզել, թե որ հակավիրուսային ծրագրերն են Ձեզ ծանոթ, որոնք տեղակայված են Ձեր տնային համակարգիչներում, ինչ գիտեք դրանց մասին, ինչպես պետք է մաքրել վիրուսակիր ֆայլերը վիրուսից, վերականգնել կամ ջնջել դրանք:

8. ԻՆՏԵՐՆԵՏԻ ՎՏԱՆԳՆԵՐԸ /15-18-րդ սլայդեր/

8.1 Ֆայլերի փոխանակման վտանգներ:

Երաժշտության, տեսանյութերի և այլ ֆայլերի ինտերենետի միջոցով փոխանակումը անձանոթներին, կարող են լինել անօրինական և հնարավորություն տան մուտք գործել ձեր համակարգիչ և փոխանցել վիրուսներ:

Պետք չէ բացել և աշխատեցնել էլեկտրոնային նամակներին կից ֆայլերը, եթե դրանք ունեն *exe, vbs, js* և այլ ընդլայնումներ: Ընդ որում, էական չէ, թե ով է ուղարկել այս նամակը: Քանի որ վարակի դեպքում վնասակար ծրագիրն ինքուրույն է ուղարկում նամակները հասցեատիրոջ անունից: Եթե դուք ստացել եք նամակ Ձեզ ծանոթ անձնավորությունից, ճշտեք, թե ի՞նչ ֆայլ է նա ուղարկում: Անձանոթ հասցեներից ստացված նամակներն անմիջապես ջնջեք:

8.2 Կիբեր հարձակումներ

Թե՛ երեխաները, թե՛ մեծահասակները կարող են օգտագործել ինտերնետը այլ մարդկանց անհանգստացնելու կամ վախեցնելու համար:

Մի՛ տրվեք սադրանքներին, մի՛ պատասխանեք սպառնալիքներին, դիմե՛ք մեծահասակներին, մի՛ թաքցրեք:

8.3 Ներխուժում անձնական կյանք

Երբ երեխան լրացնում է ինտերնետային հարցաթերթիկներ, կարող է փոխանցել տեղեկատվություն իր կամ իր ընտանիքի մասին, որն անցանկալի է փոխանցել անձանոթների կամ ինտերնետային ծանոթներին:

8.4 Անհանգստացնող բովանդակություն

Եթե երեխան օգտվում է ինտերնետից առանց վերահսկողության, ապա կարող է հանդիպել անցանկալի նկարների, տեսանյութերի կամ տեղեկատվության:

9. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՐԵՏԱՆԵՐԻՆ /19-րդ սլայդ/

Անձանոթներին ինտերնետով մի՛ փոխանցեք անձնական բնույթի ինֆորմացիա

Երբեք միայնակ մի՛ գնացեք “ինտերնետային ընկերների” հետ հանդիպման:

Երբեք անձանոթներին մի՛ փոխանցեք ֆայլեր, երգեր կամ այլ ինֆորմացիա ինտերնետի միջոցով:

Մի՛ բացեք այն էլեկտրոնային նամակը, ֆայլը կամ WEB-էջը, որը ստացել եք անհայտ կամ վստահություն չներշնչող անձից:

Երբեք մի՛ սեղմեք անձանոթների կողմից ուղարկված ինտերնետային էջերի հասցեների վրա և մի՛ բացեք դրանք:

Հարգե՛ք այլ անձանց սեփականությունը:

Երբեք մի՛ պատասխանեք անձանոթ նամակներին:

10. ԵՂԵՔ ՈՒՇԱԴԻՐ ԽԱՐԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ /20-րդ սլայդ/

Որոշ նշանների միջոցով կարելի է տարբերակել նմանատիպ նամակները՝

- Մեծ շահման մասին հայտարարություններ
- Հայտնի ընկերությունների կողմից արվող առաջարկություններ
- Առաջարկներ, որոնք շատ գրավիչ են ճշմարիտ լինելու համար
- Տառասխալներ կամ քերականական սխալներ նամակներում:

11. ՕԳՏԱԳՈՐԾԵՔ <<ԲԱՐԴ>> ԳԱՂՏՆԱԲԱՌԵՐ /21-րդ սլայդ/

- Գաղտնաբառը պետք է լինի բարդ ու երկար, տարբերվող:
- Պահպանեք ձեր անձնական ինֆորմացիան գաղտնի և ստեղծեք այնպիսի գաղտնաբառեր որոնք դժվար կլինեն գուշակել:
- Երբեք մի՛ ասեք ձեր գաղտնաբառը նույնիսկ ձեր ընկերներին:
- Բացի ձեր ընտանիքի ավագ անդամներից, ոչ մի այլ մարդու մի վսահեք ցանց մուտք գործելու ձեր նշանաբանը. ահա հետագայում կարող է տհաճությունների կամ նույնիսկ փորձանքի հանգեցնել:

12. ՄՏԱԾԵՔ ՆԱԽՔԱՆ ՍԵՂՄԵԼԸ/22-23-րդ սլայդեր/


Ֆայլեր քաշեք միայն այն կայքերից, որոնք ձեզ ծանոթ են և վստահում եք:

Սկզբում մտածեք, հետո սեղմեք:

Եղեք ուշադիր և պահպանողական ձեր անձնական ինֆորմացիայի նկատմամբ:

Համոզվեք, որ ինտերնետային կայքերը պահպանում են ձեր անձնական ինֆորմացիան:

Փակեք անձանոթ պատուհանները՝ օգտագործելով կարմիր “X”-ը



- Pop-up պատուհանները փակելու համար միշտ օգտագործեք տվյալ պատուհանի վերևի անկյունում գտնվող կարմիր “X”-ը:
- Երբեք մի՛ սեղմեք “yes,” “accept” կամ նույնիսկ “cancel”, քանի որ այն կարող է լինել խորամանկություն որևիցե անցանկալի ծրագիր տեղակայելու համար:

13. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ /24-25-րդ սլայդեր/

- ❖ Էլետրոնային հաղորդակցման ընթացքում սիրալիր և բարեկիրթ եղե՛ք, որպեսզի ձեր հաղորդակցից նույն վերաբերմունքը ստանաք:
- ❖ Չմոռանա՛ք, որ Ինտերնետի միջոցով դուք շփվում եք, ի վերջո, մարդու հետ, և նրան էլեկտրոնային ուղերձ առաքելիս աշխատե՛ք դրա բովանդակությամբ չվիրավորել նրան:
- ❖ Ցանցում մի՛ չարաշահեք ձեր ազդեցությունը. վստահություն ձեռք բերելը դժվար է, կորցնելը՝ հեշտ:

- ❖ Հարգանքով վերաբերվե՛ք այն մարդկանց ժամանակին, ում հետ հաղորդակցվում եք: Հիշե՛ք, որ ցանցային ժամանակը ոչ միայն սահմանափակ է, այլև շատերի համար թանկ հաճույք:
- ❖ Գրառումներ անելիս շատ մի՛ ծավալվեք, գրեք հնարավորինս հակիրճ:
- ❖ Մեծատառերով մի՛ գրեք:

14. ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ 10 ՈՍԿԵ ԿԱՆՈՆՆԵՐԸ /26-28-րդ սլայդեր/

1-ԻՆ ԿԱՆՈՆ.

Հիշե՛ք, որ դուք մարդու հետ եք խոսում:

2-ՐԴ ԿԱՆՈՆ.

Հետևե՛ք վարվեցողության ճիշտ նույն կանոններին, ինչ իրական կյանքում:

3-ՐԴ ԿԱՆՈՆ.

Հիշե՛ք, թե կիբերտարածության ո՞ր մասում եք գտնվում:

4-ՐԴ ԿԱՆՈՆ.

Հարգե՛ք դիմացինի ժամանակն ու հնարավորությունները:

5-ՐԴ ԿԱՆՈՆ.

Պահե՛ք սեփական դեմքը, արժանապատվությունը:

6-ՐԴ ԿԱՆՈՆ.

Եթե կարող եք, օգնե՛ք ուրիշներին:

7-ՐԴ ԿԱՆՈՆ.

Մի՛ մտեք կոնֆլիկտի մեջ և մի՛ թույլատրեք այդպիսիք:

8-ՐԴ ԿԱՆՈՆ.

Հարգե՛ք դիմացինի անձնական հաղորդակցման իրավունքը:

9-ՐԴ ԿԱՆՈՆ.

Ձեր հնարավորությունները մի՛ չարաշահեք:

10-ՐԴ ԿԱՆՈՆ.

Սովորե՛ք ներել ուրիշների սխալները:

Այժմ ես կփորձեմ Ձեզ ներկայացնել երկու հնարներ, որոնցից մեկը հնարավորություն է տալիս վերահսկելու աշակերտների այցելած ինտերնետ էջերը Google Chrome զննարկիչից /բրաուզերից/ օգտվելիս: Բացում ենք բրաուզերը, նշում ենք աջ անկյունի բրաուզերի

լրացուցիչ կարգավորումների պատուհանը, ընտրում History կամ ռուսերենի դեպքում История տողը և բացված պատուհանում ըստ ժամերի երևում են այն բոլոր ինտերնետ էջերը, որոնք բացվել են մինչ այդ պահը:

Մյուս հնարը հնարավորություն է տալիս ջնջել անցանկալի գովազդները և գովազդային բաներները Google Chrome բրաուզերից <<Adblock Plus>> ծրագրի միջոցով:

Այսքանով ավարտվում է այսօրվա ծնողական ժողովի հիմնական մասը:

Եթե նյութին վերաբերվող հարցեր ունեք, կարող եք առաջադրել, ես մեծ սիրով կփորձեմ պատասխանեմ Ձեր հարցերին:

Ամփոփելով ծնողական ժողովը, ցանկանում եմ Ձեզ բաժանել հարցաթերթիկներ, որտեղ նշված հարցերին պատասխանելով կփորձենք պարզել, թե որքանով էր արդյունավետ այսօրվա ժողովը ձեզանից յուրաքանչյուրի համար:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ ժողովին մասնակցելու համար: Հուսով եմ, որ նման թեմաներով ժողովները կլինեն շարունակական և աշակերտ-ուսուցիչ-ծնող փոխադարձ սերտ կապի շնորհիվ կկարողանանք հեռու պահել մեր երեխաներին վտանգներից և կլինենք նրանց ապահովության ու անվտանգության երաշխավորը ոչ միայն իրական, այլև վիրտուալ կյանքում:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ:

ՑՏԵՍՈՒԹՅՈՒՆ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. www.amedu.am ինտերնետային կայք
2. www.lib.amedu.am ինտերնետային կայք
3. www.dasaran.am ինտերնետային կայք
4. www.youtube.com ինտերնետային կայք